

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ

ՍԵՐԳԵՅ ՎԱՀԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՀՀ արդարադատության ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) գործունեության նպատակներով և գործառությանին առանձնահատկություններով պայմանավորված, ռեկտորի պաշտոնում ընտրվելու դեպքում իմ գործունեության ուղղությունների, բովանդակության և Ակադեմիայի զարգացման հեռանկարների վերաբերյալ ներկայացնում եմ հայեցակարգային, իրավական և կազմակերպական բնույթի ծրագրային հետևյալ դրույթները.

I. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Ակադեմիայի գործունեության արդյունավետության բարձրացմանն էապես կնպաստի հետևյալ խնդիրների հետևողական լուծումը՝
 - 1.1.1. կրթական ծրագրերի և ուսումնական պլանների շարունակական կատարելագործումը, այդ նպատակով դրանց պարբերաբար վերանայումն ու լրամշակումը՝ հաշվի առնելով նաև ունկնդիրների կարծիքները.
 - 1.1.2. դասավանդվող բոլոր առարկաների գծով ուսումնական գրականության (ուսումնամեթոդական ձեռնարկների, ուղեցույցների, խնդրագրքերի և այլն) մշակումն ու հրատարակումը.
 - 1.1.3. ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության արդյունավետ կազմակերպման, պլանավորման և կառավարման նպատակներով Ակադեմիայի գիտական խորհրդի ստեղծումը, որի ձևավորման և գործունեության կարգը պետք է սահմանվի գիտական խորհրդի կանոնակարգով.
 - 1.1.4. կառավարման խորհրդի կազմում նաև ՀՀ հատուկ քննչական ծառայության և ՀՀ քննչական կոմիտեի ներկայացուցիչների, ինչպես նաև ՀՀ կրթական համակարգը ներկայացնող անկախ գիտնականների ընդգրկումը.

- 1.1.5. դատավորների, դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակներում ընդգրկելու նպատակով անցկացվող որակավորման ստուգումներն իրականացնող հանձնաժողովների կազմերում նաև Ակադեմիայի ներկայացուցիչների ընդգրկումը.
- 1.1.6. ռեկտորին կից խորհրդակցական մարմնի՝ ռեկտորատի ստեղծումը, որը կառավարման խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում պետք է քննարկի Ակադեմիայի գործունեության տարբեր ոլորտներին վերաբերող հարցերը, ինչպես նաև կառավարման խորհրդի որոշումների կատարման ընթացքը.
- 1.1.7. պարբերական գիտական հրատարակության (օրինակ՝ «Բանբեր ՀՀ արդարադատության ակադեմիայի» վերտառությամբ ամսագրի) ստեղծումը և ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ընդունելի համարվող պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում այն ներառելուն ուղղված միջոցների ձեռնարկումը.
- 1.1.8. մասնագիտական որակյալ կրթության շարունակականությունն ապահովելու նպատակով հայաստանյան բուհերի հետ համագործակցության խորացումը, կրթական ծրագրերի և ուսումնական պլանների մշակման, կատարելագործման ու իրականացման գործընթացներում դրանց լավագույն մասնագետների ներգրավումը և համատեղ գիտական հետազոտությունների իրականացումը.
- 1.1.9. առաջավոր փորձի փոխանակման և փոխշահավետ համագործակցության ապահովման նպատակով օտարերկրյա պետությունների համանման կառույցների հետ հարաբերությունների ձևավորումը և զարգացումը, նրանց հետ համագործակցության համաձայնագրերի կամ փոխըմբռնման հուշագրերի կնքումը.
- 1.1.10. ոլորտի առաջատար արտասահմանցի մասնագետների հետ անմիջական կապերի հաստատումը, Ակադեմիայի կրթական ծրագրերի իրականացմանը նրանց ներգրավումը.

- 1.1.11. արդարադատության արդյունավետության բարձրացմանն առնչվող դրամաշնորհների շրջանակներում անցկացվող մրցույթներին մասնակցելու և դրանցում հաղթելու հավանականությունը բարձրացնելու նպատակով կառուցվածքային համապատասխան ստորաբաժանման («Դրամաշնորհների բաժնի») ստեղծումը.
- 1.1.12. գործունեության թափանցիկության և դրա նկատմամբ հասարակական պատշաճ վերահսկողության ապահովման նպատակով Ակադեմիայի համացանցային կայք-էջի առավել հրապարակայնացումը և զանգվածային լրատվության միջոցների հետ արդյունավետ համագործակցության ընդլայնումը.
- 1.1.13. արդարադատության ոլորտը լուսաբանող լրագրողների շրջանում իրավական երևույթների և գործընթացների վերաբերյալ գիտելիքները խորացնելու նպատակով ուսումնական համապատասխան ծրագրերի մշակումն ու իրականացումը.
- 1.1.14. կրթական գործընթացների (այդ թվում՝ ունկնդիրների հաճախումների) նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու նպատակով էլեկտրոնային անցակետային համակարգի ներդնումը.
- 1.1.15. կրթական ծրագրերի և դասավանդման մեթոդների գնահատման ու շարունակական կատարելագործման նպատակով դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ Ակադեմիայի ունկնդիրների շրջանում անցկացվող սոցիոլոգիական հարցումների համակարգի ներդնումը.
- 1.1.16. վերապատրաստման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Ակադեմիայում վերապատրաստվող ունկնդիրների ձեռք բերած գիտելիքների և հմտությունների ամփոփիչ ստուգման համակարգի ներդնումը:

II. ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 2.1. Ակադեմիայի գործունեության արդյունավետության կարևորագույն նախապայմաններից է հստակ կարգավորումներ պարունակող իրավական հիմքերի առկայությունը: Այդ առումով վերանայման և լրամշակման կարիք են

զգում նախ և առաջ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք) ու դրանով պայմանավորված՝ «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն): Մասնավորապես՝

2.1.1. Օրենքի հոդված 3-ի («Ակադեմիայի գործառույթները») 1-ին մասի 1-ին կետի համաձայն, Ակադեմիան՝ «1) կազմակերպում և անցկացնում է որակավորման ստուգման արդյունքներով դատավորների, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի և հատուկ քննչական ծառայության քննիչների (այսուհետ՝ քննիչներ), և դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը.»:

Մինչդեռ, «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ կարող է նշանակվել այն անձը, որը մինչև նշանակումն ունի դատախազի կամ քննիչի առնվազն 3 տարվա ստաժ:»

Միևնույն ժամանակ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «իրավական ակտի դրույթները պետք է ընկալվեն միանշանակ (...)»:

Հետևաբար, «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի քննարկվող դրույթը հակասում է ՀՀ օրենսդրությանն այն հիմնավորմամբ, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների «թեկնածությունների ցուցակներ», հետևաբար՝ նաև դրանցում «ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում» լինել չի կարող: Ուստի, Օրենքն այս մասով ենթակա է փոփոխության:

2.1.2. Օրենքի հոդված 10-ի 1-ին մասի («Ռեկտորի լիազորությունները») 14-րդ կետի համաձայն՝ «14) Ակադեմիայում ուսումնառության ընթացքում դատավորների կամ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձի կողմից համապատասխանաբար դատավորի, քննիչի կամ դատախազի վարքագծի կանոնների ենթադրյալ խախտում պարունակող արարքների վերաբերյալ տեղեկությունների տիրապետման

դեպքում այդ մասին հայտնում է համապատասխանաբար Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին (այսուհետ՝ քննչական կոմիտեի նախագահ), հատուկ քննչական ծառայության պետին կամ գլխավոր դատախազին.»:

Տվյալ կետում պետք է նշել նաև քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց, բացի այդ՝ նախատեսել նաև վերապատրաստվող դատավորներին, դատախազներին և քննիչներին: Ուստի, օրենքն այս առումով ևս ենթակա է լրացման:

2.1.3. Լրամշակման է ենթակա նաև Օրենքի հոդված 15-ը («Ակադեմիայի շրջանավարտների աշխատանքի կազմակերպումը»): Օրենսդրական տվյալ կարգավորումից հետևում է, որ Ակադեմիայում ուսուցումն ավարտելուց հետո ***դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք պարտավոր են*** անցնել իրավաբանի որակավորում պահանջող աշխատանքի դատական դեպարտամենտում, իսկ ***դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձինք՝ կարող են*** դիմել համապատասխանաբար դատախազության աշխատակազմում և քննչական կոմիտեի դեպարտամենտում իրավաբանի որակավորում պահանջող աշխատանքի ընդունվելու համար:

Մինևույն ժամանակ, անհասկանալի է՝ ***արդյո՞ք*** դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց դատական դեպարտամենտում իրավաբանի որակավորում պահանջող աշխատանքի անցնելու պարտականությունը ***ենթադրում է նրանց աշխատանքի ընդունելու՝ դատական դեպարտամենտի պարտականություն:***

Հետևաբար, առաջարկվում է ***Օրենքով այս առումով սահմանել դատական դեպարտամենտում, դատախազության աշխատակազմում և քննչական կոմիտեի դեպարտամենտում այդ նպատակով հատուկ հաստիքներ առանձնացնելու պարտականություն:***

2.1.4. Ակադեմիայի Կանոնադրության և Օրենքի միջև առկա են մի շարք հակասություններ: Օրինակ՝ Կանոնադրության 106-րդ կետի համաձայն, Ակադեմիայի ունկնդիրներ են բացառապես՝

«1) դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 118-րդ հոդվածով սահմանված կարգով ցուցակում ընդգրկված նախկին դատավորների.

2) դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք՝ բացառությամբ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ուսումնառությունից ազատված անձանց.

3) դատավորները, դատախազները, ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք, դատական ծառայողները, դատախազության աշխատակազմում պետական ծառայողները և դատական կարգադրիչները:»

Մինչդեռ, Օրենքի հոդված 14-ի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, Ակադեմիայի ունկնդիրներ են նաև՝ «4) քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք, բացառությամբ (...) օրենքով սահմանված կարգով ուսումնառությունից ազատված անձանց:»

Հետևաբար, անհրաժեշտ է Կանոնադրությունը համապատասխանեցնել Օրենքին՝ հաշվի առնելով դրանում կարարված փոփոխություններն ու լրացումները:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Օրենքի հոդված 2-ի («Ակադեմիայի իրավական կարգավիճակը և նպատակները») 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն, որպես նպատակ, սահմանված է՝ «3) դատավորների, դատախազների, դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց կրթական ծրագրերի աստիճանական մերձեցումը, համատեղ կրթական ծրագրերի իրականացումը:»

Մինչդեռ, խիստ վիճելի է այս կապակցությամբ դատախազների և դատավորների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց (ընդ որում, տվյալ դեպքում անհասկանալիորեն անտեսվել են քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք) և փորձառու դատախազների ու դատավորների կրթական ծրագրերի մերձեցման անհրաժեշտությունը: Տվյալ պարագայում առավել նպատակահարմար է փարբերակված մոտեցումը:

3.1.1. Միևնույն ժամանակ, կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացման առումով էական նշանակություն կարող է ունենալ, մի դեպքում, քննիչների, դատախազների և դատավորների, մյուս դեպքում՝ քննիչների, դատախազների և դատավորների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց համար համատեղ դասընթացների կազմակերպումն ու իրականացումը:

Հետևաբար, այս ուղղությամբ ևս անհրաժեշտ է գործուն միջոցներ ձեռնարկել:

3.2. Օրենքի հոդված 3-ի («Ակադեմիայի գործառույթները») 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, Ակադեմիան՝ «4) կազմակերպում է դատավորների, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի և հատուկ քննչական ծառայության քննիչների (այսուհետ՝ քննիչներ), դատախազների և դատական կարգադրիչների հատուկ ուսուցումը՝ հատուկ միջոցների և հրազենի գործադրման ունակություններն ուսուցանելու նպատակով.»:

Մինչդեռ, անհրաժեշտ է իրականացնել նաև հատուկ միջոցների ու հրազենի գործադրման ունակությունների և հմտությունների ամրապնդմանն ու կատարելագործմանն ուղղված պարբերական վերապատրաստումներ:

3.3. Օրենքի հոդված 14-ի («Ակադեմիայի ունկնդիրները») 3-րդ մասի համաձայն՝ «3. Վերապատրաստման ընթացքում սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ունկնդիրներն (...) ազատվում են իրենց պաշտոնեական պարտականությունների կատարումից՝ վարձատրության իրավունքի պահպանմամբ:»

Մինչդեռ, գործնականում, հարկապես դատավորների, քննիչների և դատախազների պարագայում, օրենքի տվյալ պահանջն անուշադրության է մատնված: Արդյունքում տուժում է համապատասխան գործընթացի արդյունավետությունը: Հետևաբար, անհրաժեշտ է գործուն միջոցներ ձեռնարկել Օրենքի նաև տվյալ դրույթի կենսագործումն ապահովելու համար:



Ս. Առաքելյան